ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն ստորև ներկայացնում է իր կարիքների համար ռադիոկայանների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-24/4 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2024 թվականի ապրիլի 1-ին կնքված N ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-24/4-1 պայմանագրում 2024 թվականի ապրիլի 26-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N 1

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը սույն օրենքով սահմանված կարգով կարող է կնքվել պայմանագիր՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում:

Փոփոխության նկարագրություն

Վճարման ժամանակացույցի հաստատում:

Փոփոխության հիմնավորում

ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-24/4-1 ծածկագրերով գնման պայմանագրերի 8.5-րդ կետի և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն կնքվել է համաձայնագիր վճարման ժամանակացույցը հաստատելու համար:

Պատվիրատու՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտե

Համաձայնագիր-1
01.04.2024թ. կնքված N ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-24/4-1 ծածկագրով գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

ք. Երևան «26» ապրիլի 2024թ.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն այսուհետ՝ «Գնորդ», ի դեմս ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղար Է. Գևորգյանի մի կողմից, և «Տոպազ-95» ՍՊԸ-ն, այսուհետ՝ «Վաճառող», ի դեմս Ընկերության տնօրեն՝ Ս. Բաբանյանի մյուս կողմից, երկուսը միասին այսուհետ՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 01.04.2024թ. կնքված N ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-24/4-1 ծածկագրով գնման պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 8.5-րդ կետը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Կողմերը որոշեցին՝

1.1. Պայմանագրի 8.13 կետին համապատասխան հաստատել ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը՝ համաձայն կից հավելվածի /կցվում է/:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրը և կից հավելվածը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3. Սույն պայմանագրում կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4. Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված է հայերեն լեզվով, /երկու/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պետական եկամուտների կոմիտե	«Տոպազ-95» ՍՊԸ
ք.Երևան, Մ. Խորենացի 3,7	ք. Երևան, Մ.Բաղրամյան 33ա
ՀՎՀՀ 02647057	ՀՎՀՀ 00010717
Հ/Հ 900011013902	«Ամերիաբանկ» ՓԲԸ
ՀՀ ՖՆ աշխատակազմի	Հ/Հ 1570001124800100
գործառնական վարչություն	տնօրեն
Գլխավոր քարտուղար	
Է. Գևորգյան _____	Ս. Բաբանյան _____
/ստորագրություն/ Կ.Տ/	/ստորագրություն/ Կ.Տ.

Հավելված
Հաստատված է 01.04.2024թ. կնքված N ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-24/4-1
գնման պայմանագրի «26» ապրիլի 2024թ. փոփոխությամբ

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության անվանումը	Բյուջետային ծախսերի տնտ. դասակ. հոդվածը	Նախատեսվում է ֆինանսավորել 2024թ. ՀՀ ՊԵԿ բյուջետային միջոցներով նախատեսված հատկացումների հաշվին, ըստ ամիսների՝ ընդ որում												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	**Ընդամենը**
ռացիաներ	5122							10 000 000	10 000 000	10 000 000	18 325 200	18 325 200	18 325 200	**18 325 200**

ԳՆՈՐԴ
ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք.Երևան, Մ. Խորենացի 3,7
ՀՎՀՀ 02647057
Հ/Հ 900011013902
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
Գլխավոր քարտուղար

Է. Գևորգյան _____
/ստորագրություն/ Կ.Տ/

ՎԱՃԱՌՈՂ
«Տոպազ-95» ՍՊԸ
ք. Երևան, Մ.Բաղրամյան 33ա
ՀՎՀՀ 00010717
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570001124800100
տնօրեն

Ս. Բաբանյան _____
/ստորագրություն/
Կ.Տ.